«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ « Բնանկարի ուսուցումը միջին դպրոցում նախագծային մեթոդով»

Առարկան՝ Կերպարվեստ

Հետազոտող ուսուցիչ՝ Լիլիթ Հովհաննիսյան

Ուսումնական հաստատություն՝ Ա. Չեխովի Անվան Հ. 55 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ 1 Բնանկարի ուսուցումը միջին դպրոցում նախագծային մեթոդով

- Նախագծային ուսուցման հիմնական դրույթները.....5
- Նախագծային ուսուցման նշանակությունը սովորողների սովորելու մոտիվացիայի բարձրացման վրա կերպարվեստի դասավանդման ընթացքում.....9
- Նախագծային աշխատանքի օրինակ: «Բնանկարի աշխարհում».....15

Եզրակացություններ.....19

Օգտագործված գրականության ցանկ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից մանկավարժության մեջ ամենատարածված խնդիրներից են սովորողների ինքնուրույնության ու նախաձեռնողականության զարգացումը, հաջողության հասնելու մոտիվացիայի խթանումը: Ինքնուրույն և մոտիվացված սովորող ունենալու պահանջը պայմանավորված է կրթական համակարգի կատարելագործմամբ, սովորողին զարգացող կյանքին նախապատրաստելու անհրաժեշտությամբ: Փորձը ցույց է տալիս, որ անհաջողակ, դժվարություններից խուսափող մարդիկ չեն գտնում կամ քիչ են գտնում ինքնուրույն գործունեության այնպիսի ոլորտ, որտեղ կարելի է իրացնել իրենց ներուժը: Կրթական համակարգում իրականացվող բարեփոխումները էլ ավելի բարձր պահանջներ են առաջադրում սովորողների մտավոր, հոգևոր և կյանքի համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների տիրապետման նկատմամբ: Այս բարեփոխումները և դրանցից բխող պահանջները մեծապես պայմանավորված են նաև սովորողների մոտ մի շարք կարողունակությունների ձևավորմամբ, որոնք անգնահատելի դեր ունեն սովորողների անձի ձևավորման, զարգացման ապահովման, մտավոր առաջընթացի, բարոյահոգեբանական որակների դաստիարակման և արժեքային համակարգի ձևավորման գործում:

Այսօրեական տեղեկատվական տեխնոլոգիաների հարուստ ու բազմազան իրականության մեջ կրթական համակարգի արդիականացումը ուղիղ համեմատական է նոր սերնդի պահանջմունքներին, քանզի ավանդական ուսուցչակենտրոն դասն այլևս դժվարանում է բավարարել սովորողների հիմնական մասի կրթական պահանջմունքները: Այս համատեքստում կրթական համակարգին մեծապես կարող է օժանդակել նախագծային մեթոդը, որը հետազոտական, ստեղծագործական մեթոդների համադրություն է, որի կենտրոնում սովորողն է: Գիտական և տեխնոլոգիական առաջընթացը, կրթության հեղինակության բարձրացումը մարդուն

կանգնեցնում են մրցակցության, օբյեկտիվ գնահատման և մրցակցային ընտրության հետ կապված իրավիճակներում որոշակի մակարդակի հաջողության հասնելու անհրաժեշտության առաջ: Այդ իսկ պատճառով, կարծում ենք, որ դպրոցն ու ուսուցիչն այստեղ մեծագույն դերակատարում ունեն, և հատկապես յուրաքանչյուր ուսուցչի մասնագիտական որակներից, հմտությունից, նորարարությունից ու ստեղծագործականությունից է կախված, թե որքանով կառաջադիմի ու լավ արդյունքների կհասնի սովորողը:

Հավատացած ենք, որ նախագծային ուսուցման համընդհանուր ներդրումը ՀՀ կրթական համակարգում կարող է դառնալ սովորողների ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը խթանելու արդյունավետ գործիք և մոտիվացիայի ու ստեղծագործականության անսպառ աղբյուր:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգի բարեփոխումների արդի փուլում նախագծային ուսուցման մեթոդի ներդրման նհրաժեշտությամբ, որի հիմնական նպատակներից են սովորողների ինքնուրույնության, նախաձեռնողականության սեփական հնարավորությունները ճանաչելու և զարգացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը, ինչպես նաև մերհետազոտության համատեքստում սովորողների գեղագիտական դաստիարակության գործընթացի կազմակերպումը:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել ուսուցիչների մշակելու, համակարգելու, որպես փորձագետ և խորհրդատու հանդես գալու դերը սովորողների մոտ մի շարք առաջնային կարողունակությունների զարգացման գործում:

Հետազոտության խնդիրը:

- Հետազոտության խնդիրն է սահմանել նախագծային ուսուցման մեթոդի դերն ու նշանակությունը՝ որպես կրթական համակարգի արդիականացման բաղադրիչ:
- Ցույց տալ «կերպարվեստ» առարկայի դասավանդման ընթացքում նախագծային աշխատանքների ուսուցողական ու դաստիարակչական նշանակությունը՝:

ԳԼՈՒԽ 1 ԲՆԱՆԿԱՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԵԹՈԴՈՎ

• Նախագծային ուսուցման հիմնական դրույթները

Կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխությունները սովորողից պահանջում են նոր մտածելակերպ. ընկալում, համագործակցային կարողություններ, նոր կոմպետենցիաներ, նոր դերեր, հմտություններ: Այս պայմաններում կարևոր է, որ հանրակրթական ուսումնական հաստատությունը, որտեղ կայանում է անձի կրթական ու դաստիարակչական առանցքային գործընթացը, նույնպես քայլի ժամանակի մարտահրավերներին համընթաց՝ բավարարելով կրթական համակարգի արդիականացման առաջնային շահակիցների՝ սովորողների կրթական կարիքները: Այս համատեքստում կարևոր բաղադրիչ է նաև ուսումնական գործընթացի ընթացքում նորարարական բաղադրիչների, ուսումնամանկավարժական մեթոդների, հնարների կիրառումը, որոնցից է նաև նախագծային ուսուցումը: Նախագծային ուսուցումն իրենից ենթադրում է դիդակտիկ համակարգ, իսկ նախագծային մեթոդն այդ համակարգի բաղադրիչն է, մանկավարժական տեխնոլոգիա, որը ներառում է ոչ միայն գիտելիքների ինտեգրում, այլև գիտելիքների կիրառում, նորերի ձեռքբերում: Նախագծային ուսուցումը ուսումնաճանաչողական և համատեղ աշխատանքի կազմակերպման ձև է, որում ներգրավված են դասավանդողներն ու ուսումնառուները, կարող է հարմարեցվել տարբեր միջավայրերի և նպատակների: Այն առավել արդյունավետ է, երբ դուրս է գալիս «դասարանային» և դպրոցական մակարդակից և գնում է դեպի համայնք:

Ուսուցման այս եղանակի ընթացքում ուսուցչի մասնակցությունը սահմանափակվում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դերով: Այստեղից կարելի է եզրահանգել, որ նախագծային մեթոդի հիմնական նպատակներից է սովորողի սովորել սովորելու կարողունակության զարգացումը, որն իրենից ենթադրում է, որ սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն: Նախագծային մեթոդի վերջնարդյունք կարելի է համարել՝ սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական HYPERLINK "https://hy.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%BF%D5%A5%D5%B2%D5%AE%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%B4%D5%BF%D5%A1%D5%AE%D5%B8%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80"_____ HYPERLINK "https://hy.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%BF%D5%A5%D5%B2%D5%AE%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%B4%D5%BF%D5%A1%D5%AE%D5%B8%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80"մտածողության ձևավորումն ու զարգացումը, ինչպես նաև դաստիարակության տարատեսակների սեմանումը, սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորումը:

Նախագծային մեթոդով իրականացված դասը, որպես սովորողների կարողունակությունների զարգացմանն ուղղված դասի տեսակ, ձևավորում է նաև մշակութային կարողունակությունը, որի համատեքստում սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունեն Հայաստանի աշխարհագրության, հասարակական-քաղաքական համակարգի և պատմության հիմնարար իմացություն: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային
ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնելու սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ:

Նախագծային մեթոդի հիմքում ընկած են ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջ.Դյուիի կողմից առաջ քաշած մանկավարժական հասկացությունները, ով դրանք գործնականում կիրառել է Չիկագոյի փորձարարական լաբորատոր դպրոցում 1896 – 1904 թվականներին: Նա այն կարծիքին էր, որ դպրոցի բոլոր գործողությունները պետք է ուղղված լինեն սովորողի մտածողության ձևավորմանը, որը հիմնված է անձնական փորձառության վրա: Ըստ Դյուիի՝ մեթոդը տալիս էր այնպիսի պայմաններ, որոնք հարմարեցված էին անհատական կարիքներին և կարողություններին, ինչպես նաև կարող էր ապահովել դիտարկման, ներկայացման, հետազոտության, գաղափարների մշտական զարգացման համար համապատասխան պայմաններ: Ցանկացած նախագծի հիմնական <u>նպատակն</u> է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժության մեջ անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ: Նախագծային ուսուցումը համապատասխանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության չորս գերակայությունների տրամաբանությանը՝ սովորել իմանալու համար, սովորել կիրառելու համար, սովորել լինելու համար, սովորել միասին ապրելու համար: Նախագծային մեթոդը ստեղծում է նպաստավոր պայմաններ հետևյալ

կարողությունների ու հմտությունների ձևավորման ու զարգացման համար՝որոնողական, հետազոտական հմտություններ, թիմում աշխատելու կարողություններ, շնորհանդեսների պատրաստման հմտություններ և ներկայացման հմտություններ:

Փոփոխվող աշխարհի և ինֆորմացիոն մեծ հոսքի պայմաններում դա մեծ մարտահրավեր է ժամանակակից ուսուցչի համար, որից լուրջ պատրաստվածություն և աշխատանքի կարևորության գիտակցություն է պահաջվում: «Ուսուցիչը պարտավոր է ուսուցումը կազմակերպել բարձր մասնագիտական մակարդակով, ապահովել սովորողների կողմից ուսումնական ծրագրերի յուրացումը պետական կրթական չափորոշիչներին համապատասխան»: ՀՀ կրթական նոր չափորոշչի պահանջներից մեկը աշակերտական նախագծերն են: Այս տարի չափորոշիչը փորձարկվեց ՀՀ Տավուշի մարզում, սակայն հայտնի է, որ շուտով այն պետք է ներդրվիվի ամբողջ Հայաստանում, և բոլոր ուսուցիչները պիտի նախագծեր իրականացնեն դպրոցներում: Դրանք սովորողներին ուսումնառության մեջ ներգրավելու և նրանց հետաքրքրությունը խթանելու շատ արդյունավետ միջոց են և օգնում են ձևավորել չափազանց կարևոր գործնական կարողություններ և հմտություններ:

1.2 Նախագծային ուսուցման նշանակությունը սովորողների սովորելու մոտիվացիայի բարձրացման վրա կերպարվեստի դասավանդման ընթացքում

Նախագծային ուսուցման կիրառությունը սովորողին հնարավորություն է տալիս համատեղելի դարձնել սեփական հետաքրքրությունները, երազանքները ուսումնառության գործընթացի հետ: Ուսուցիչը որևէ կերպ չպետք է սեփական կարծիքը, տեսլականը պարտադրի սովորողին աշխատանքի իրականացման ժամանակ: Նախագծային աշխատանքի կենտրոնական սուբյեկտը հենց սովորողն է: Նախագծային ուսուցումը սովորողի առաջ բացում է սեփական ուժերը չափելու, անծանոթ իրավիճակներում արագ կողմնորոշվելու, առկա գիտելիքների ներդրմամբ լուծումներ գտնելու լայն հնարավորություններ: Նախագծերը կարող են լինել անհատական և խմբային, տեղական և հեռահաղորդակցական:

Վերջինիս դեպքում սովորողների խումբը կարող է նախագծային աշխատանքն իրականացնել համացանցում՝ գտնվելով տարբեր տարածաշրջաններում: Ընդ որում՝ ցանկացած նախագիծ կարող է ունենալ իր աշխատանքային ընթացքն արտացոլող կայքը: Այսպիսի ուսումնական նախագծի նպատակն այն է, որ բազմակողմանիորեն լուսաբանվի նախագծի ընթացքում իրականացվող ուսումնասիրությունների և արդյունքի ստացման ողջ ընթացքը:

Նախագծային ուսուցման ներկայացվեղ պահանջներն են.

- Նախագծի թեմա և ուսումնասիրման ենթակա թեմայի հետ կապված հարցադրումներ:
- Աշխատաքի իրականացման հստակ փուլեր՝ նախնական պլանավորում, գործողությունների ծրագիր, ժամկետներ, միջանկյալ հաշվետվություններ, աշխատանքի վերջնաժամկետ:
- Ակնկալվող արդյունք՝ հրապարակախոսություն, տեսաֆիլմ, ձեռնարկ, փաթեթ, շտեմարան, հոդված, ներկայացում, և այլն:

Նախագիծն իրականացման ընթացքում սովորողների հետազոտական աշխատանքին ներկայացվող պահանջներն են.

- Տեքստային բաղադրիչի վերլուծում, բովանդակության քննարկում, եզրակացության ձևակերպում:
- Դիրքորոշման հիմնավորում, ստեղծագործական մտածողության առկայություն:
- Ինքնուրույնություն, նախաձեռնություն, ստեղծագործական մոտեցումներ:
- Անհրաժեշտ տեղեկատվական հոսքերի կառավարում՝ մասնագիտական բառարանների, գիտահանրամատչելի, հանրագիտարանային գրականության, Վիքիդարանի և հանրագիտարանային հայալեզու, ինչպես նաև օտարալեզու կայքերի գործածում, զանազան համացանցային գործիքների կիրառում:
- Կարդացած տեքստերի համադրում, դրանց տարբերությունների քննարկում, եզրակացություն-հետևություն անելու կարողության ձևավորում:

Նախագիծի մեկնարկի համար խիստ կարևոր է, որ սովորողներն ունենան նախնական մոտիվացիա: Գործունեությունը պետք է հետաքրքիր լինի սովորողի համար: Նյութի անսովոր ներկայացումը, խնդրի լուծման վրա հիմնված ուսուցման տեխնոլոգիայի օգտագործումը կարող է մեծացնել հետաքրքրությունը կրթական գործունեության նկատմամբ: Նյութի նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու միջոցներից մեկը կարող է լինել կյանքի իրավիճակների և գործնական նշանակության վերլուծությունը: Ուսուցման արդյունավետությունը չափվում է ոչ միայն և ոչ այնքան աշակերտի արդյունքի վրա, այսինքն՝ ինչ կարող է նա անել: Այս խնդիրը լուծելի է դառնում, երբ ուսուցման ընթացքում վերաբաշխվում են հիմնական արժեքները. Š ուսումնառության ընթացքում ուսումնառողը պասիվ ընկալողից վերածվում է ակտիվ և գործուն մասնակցի, դասավանդողը հրաժարվում է սովորեցնողի, վերահսկողի, խրատողի իր դերից և դառնում է այդ գործընթացի կազմակերպող, խորհրդատու և որպես գործընկեր՝ ուսումնառողի հետ մասնակցում է հետազոտական
աշխատանքներին:

Ուսուցիչը պետք է սովորողին հնարավորություն տա գործել, նախագիծը մշակել ու պլանավորել ինքնուրույն: Հարկ է կարևորել յուրաքանչյուր սովորողի սուբյեկտիվ կարծիքը, քննարնկել, եզրահանգումներ անել: Ինչպես արդեն նշել էինք, այստեղ առանցքային դերակատարում ունի նաև ուսուցիչը, ով ապահովում է մասնագիտական խորհրդատավություն սովորողին, օգնում է որոնել տեղեկատվական գրականություն, այլ

նյութեր, մեդիանյութեր, օգնում է կոնկրետ հարցեր լուծելիս առաջացած դժվարությունները հաղթահարել, ինչպես նաև փոխանցում է համապատասխան հմտություններ:

Նախագծային աշխատանքը հետաքրքիր է նաև նրանով, որ թիմային աշխատանքի ժամանակ սովորողներն էլ ավելի են մտերմանում, փորձում են օգնել միմյանց, սովորում են սովորեցնում: Վերջիններիս մոտ ամրակայվում է կոլեկտիվ աշխատանքի գաղափարը, մեկտեղ աշխատելու, սովորելու, ուսումնասիրելու ու հետազոտելու ընթացքում սովորողների մոտ բարձրանում է պատասխանատվության զգացումը, սեփական ներդրումն ունենալու ձգտումը: Այսպիսով, աշակերտները կատարում են հետազոտություններ, վերլուծում տեղեկությունները, աշխատում նախագծի վրա, բնագիտական առարկաներից իրականացվող նախագծերի դեպքում գիտափորձեր են անում, պատրաստվում նախագծի պաշտպանությանը: Պաշտպանությունը աշխատանքի վերջնական արդյունքն է, որը կարող է լինել
ցանկացած բնույթի՝ կախված սովորողի ստեղծագործ մոտեցումից: Ուսուցիչը լսում է, աշակերտներին հարցեր ուղղում, անհրաժեշտության դեպքում ուղղորդում է, գնահատում նրանց կատարած աշխատանքի որակը և հիմնախնդրի լուծման ինքնատիպությունը: : Ուսուցիչը պետք է անպայման իրազեկ լինի օրենքով սահմանված իր պարտավորություններին և անվերապահորեն կատարի դրանք, որոնցից այս համատեքստում կառանձնացնենք հետևյալը՝ «Ուսուցիչը պետք է սովորողների մեջ զարգացնի ինքնուրույնություն, նախաձեռնություն և
ստեղծագործական ունակություններ»:

Աշխատանքի հաջորդ փուլում սովորողները ներկայացնում են ուսումնական նախագիծը, մասնակցում խմբային վերլուծությանը, արդյունքների գնահատմանը: Նախագծային մեթոդով աշխատանքը բավականին կանոնակարգված ու
համակարգված աշխատանք է, որտեղ սովորողն ու ուսուցիչն ունեն իրենց դերերը: Կարևոր է, որ հատկապես օժտված սովորողները մշտապես օգնեն տասընկերներին և առաջնորդեն հետ մնացող սովորողներին:

Իսկ ի ՞նչ է տալիս սովորողներին նախաձեռնողական և սովորել սովորելու կարողունակության, ինքնուրույնության զարգացումը, որը նա ձեռք է բերում

նախագծային ուսուցման շրջանակներում: Աներկբա է, որ առաջին հերթին սովորողը դառնում է ինքնավստահ, բարձրանում է վերջինիս ինքնագնահատականը, հետազոտությունների ժամանակ ձեռք է բերում մի շարք այլ կարողունակություններ ու հմտություններ, որոնք կիրառելի են կյաքում, բացի դա՝ սովորողը դուրս է գալիս տեսական գիտելիքի շրջանակից՝ հնարավորություն ունենալով գործնականում սեփական գիտելիքը կիրառելու ու ակնկալվող վերջնարդյունքը տեսնելու: Աշխատանքի ընթացքում կարևոր է նաև ուսուցչի կողմից հետադարձ կապի ապահովումն ու սովորողին ինքնանդրադարձ կատարելու հնարավորություն տալը: Հետաքրքիր և ուսուցանող նախագծային աշխատանքներ կարելի է իրականացնել նաև կերպարվեստի դասավանդման շրջանակներում: Ժամանակակից հանրակրթական դպրոցում յուրաքանչյուր ուսումնական բնագավառում ուսումնական գործունեության տեսակները նախագծելիս պետք է նկատի ունենալ ոչ միայն տվյալ առարկայի գծով գիտելիքների հաղորդման, այլև սովորողի մեջ նշված հատկանիշների ձևավորման և զարգացման անհրաժեշտությունը: Իր յուրահատկության, բովանդակության, ինչպես նաև ուսումնական բոլոր առարկաների հետ փոխադարձ կապ ստեղծելու բացառիկ հնարավորության շնորհիվ, կերպարվեստը կոչված է խթանելու սովորողների մտավոր և հոգևոր ներուժի բացահայտումը, զարգացումը և հարստացումը, ընդհանուր աշխարհայացքի ձևավորումը: Կերպարվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելը և ինքնուրույն գեղարվեստական գործունեություն իրականացնելը նպաստում է՝

- Իրականության գիտակցական և զգայական ընկալման ձևավորմանը. Վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը:
- Անձի ինքնաճանաչմանը, ինքնաարտահայտմանը և մտահորիզոնի ընդլայնմանը.:
- Սովորողների գեղարվեստական կրթությանը, գեղագիտական և բարոյական դաստիարակությանը:
- Ազգային-հայրենասիրական և մարդասիրական զգացումների արմատավորմանը:

Այսպիսով, կարող ենք պնդել, որ նախագծային ուսուցումը կարող է համախմբել դպրոցականների մտավոր ներուժը, ուղղորդել նրանց հետազոտելու, նախագծելու, նոր

ու անծանոթ երևույթներ բացահայտելու և ուսումնասիրելու: Հատկապես բովանդակային ու հետաքրքիր նախագծային աշխատանքներ կարելի է իրականացնել կերպարվեստի ուսումնասիրության շրջանակներում՝ թույլ տալով սովորողներին ճանաչել բնությունն ու մարդուն բնությանմ մեջ: Կերպարվեստի ուսումնական գործունեությունը իրակացվում է խառը ուսուցման ձևաչափով ելնելով՝ թեմայի բովանդակությունից, Առաջարկվող գործունեության ձևերի բնույթից, դասի նպատակից, դասարանի, սովորողների, ուսումնասիրվող նյութի, քննարկվող հիմնախնդրի առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից: Առաջարկվում է կիրառել դեմ առ դեմ և առցանց ուսուցման եղանակները՝ համադասարանական, անհատական, զույգերով և փոքր խմբային աշխատանքների միջոցով: Ուսուցումն իրականացվելու է համապատասխան նկարակալներով, դազգահներով, երաժշտական գործիքներով, տեխնիկապես հագեցած, արվեստի սենյակներում կամ դպրոցական արվեստանոցներում: Ուսումնական գործընթացում, կարող են ընտրվել ուսումնական գործունեության
այլընտրանքային տեսակներ:

Սովորողների ստեղծագործականության, առարկայական հմտությունների, գունախաղի ու ստվերի, բնության, բնության պատկերների մասին պատկերացումների զարգացումը կերպարվեստի դասավանդման ընթացքում թույլ է տալիս բնանկարի ուսուցումը: Բնանկարը ընդհանուր տեսարանի կամ որևէ տեղանքի պատկեր է, գլխավորապես գեղանկարչության և գրաֆիկայի մեջ, ինչպես նաև գեղարվեստական ստեղծագործություն, որի պատկերման առարկան բնությունն է: Բնանկարը բնության ձևերի և երևույթների, լույսի, օդի, տարածության գեղարվեստական արտացոլումն է՝ պայմանավորված հեղինակի աշխարհայացքով, մտքերով և զգացմունքով: Բնանկարի առանձին տարրեր ձևավորվել են Հին աշխարհի արվեստում: Ինքնուրույն զարգացել է Չինաստանում Տան (VIII - IX դդ) և Սուն (X - XIII դդ) շրջաններում:
Եվրոպայում ձևավորվել է որպես ավարտուն ժանր XVII դարում:

Ստացվում է, որ բնանկարի մասին ժամանակակից պատկերացումները ձևավորվել են դարերի ընթացքում՝ այն պատկերելու գեղարվեստական տեխնիկայի մշակմամբ: Ուսուցիչը պետք է սովորողի մոտ ձևավորի հմտություններ

պատկերների ճիշտ կառուցման, լույսի ու ստվերի խաղն արտացոլելու առումով: Բնության կերպարը հսկայական ազդեցություն ունի երեխայի անհատականության ձևավորման վրա, օգնում է տեսնել ու լսել շրջապատող աշխարհը, գնահատել ու հասկանալ արվեստի գործի գեղարվեստական արժեքը: Աշխատանքի դրական արդյունքների հասնելու համար անհրաժեշտ է սովորողների գործունեությունը կառավարել այնպես, որ նրանք ունենան հաջողության հասնելու մոտիվացիա և տեսնեն իրենց հաջողությունները յուրաքանչյուր աշխատանքի մեջ: Դրան կարելի է հասնել՝ բարդ պատկերային առաջադրանքը բաժանելով մի շարք պարզ և սովորողի համար բավականին մատչելի փոքր առաջադրանքների: Բնանկարի ուսուցումն ու պատկերումը միջին դպրոցի սովորողների համար ունի մեծ նշանակություն: Այն նպաստում է աշակերտի անձնային որակների, գեղագիտական և բարոյական զարգացման, շրջապատող աշխարհի հանդեպ սիրո զարգացմանը: Բնությունը անսահման բազմազան է և գեղեցիկ: Արևի լույսը և շրջակա միջավայրը ստեղծում են գույների անսպառ ներդաշնակություն: Բնության մեջ ամեն ինչ բնական է, ներդաշնակ: Եվ այդ ամենը զարգացնում է սովորողի մետաճանաչողությունը, գեղագիտական ճաշակը, սերը բնության նկատմամբ հենց կերպարվեստի դասաժամին բնանկարի ուսուցման միջոցով

Ուստի և կարող ենք պնդել, որ նախագծային աշխատանքի իրականացման ընթացքում կապը բնության հետ, արվեստի գործերի համակողմանի ուսումնասիրութունը, սովորողների մշակութային կարողունակությունների զարգացումը մեծ ձեռքբերում է: Ուսուցման այս մեթոդը մեծ հնարավորություններ կարող է ստեղծել սովորողների ինքնաճանաչման համար, ինչն անգնահատելի է:

• Նախագծային աշխատանք: «Բնանկարի աշխարհում»

Հիմնական առարկա՝ «***Կերպարվեստ***»:

Ինտեգրված առարկաներ՝ «***Բնագիտություն***», «***Ես և շրջակա աշխարհը***», «***Ինֆորմատիկա***»:

Նախագծի թեման՝ «***Բնանկարի ուսուցումը միջին դպրոցում***»:

Մասնակից սովորողների թիվը՝20

Աշխատանքի տևողությունը՝ 1 շաբաթ

Հենվելով մեր մանկավարժական փորձի վրա՝ կարող ենք պնդել, որ միջին դպրոցի սովորողները ցուցաբերում են առանձնակի ուշադրություն և հետաքրքրություն կերպարվեստի նկատմամբ: Գործնական ու խմբային աշխատանքների ժամանակ վերջիններս ցուցաբերում են ցանկություն՝ ինքնուրույն գործնական առաջադրանքներ կատարելու համար: Ուստի և կարծում ենք թեմայի շուրջ նախագծային աշխատանքի իրականացումը կարող է մեծապես օգնել սովորողների աշխատունակության բարձրացմանը, իմացական կարողությունների ու գործնական հմտությունների զարգացմանը: Վստահ ենք, որ կերպարվեստ առարկայի շրջանակներում բնանկարի ուսումնասիրությունը թույլ կտա, որ սովորողները ձեռք բերեն օժանդակ գիտելիքներ նաև «բնագիտություն», «ես և շրջակա աշխարհը» «ինֆորմատիկա» առարկաներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ

Աշխատանքի ողջ ընթացքում ուսուցիչը կուղղորդի սովորողներին, սակայն վերջիններս կգործեն ինքնուրույն առանց որևէ ուղիղ միջամտության: Սովորողները կայցելեն առցանց պատկերասրահներ, կուսումնասիրեն մի շարք արվեստի գործեր, կծանոթանան մեծանուն նկարիչների կյանքին և ստեղծագործություններին: Նախագծային աշխատանքը սովորողները կամփոփեն խմբային բնանկարների, տեսասահիկների, զեկույցների և տեսահոլովակի տեսքով: Ուսուցիչը նախօրոք կկազմի նախագծողների 2 խումբ, որոնք կունենան իրենց ուսումնասիրության ոլորտը:

ԽՈՒՄԲ-1

Առաջին խմբում ընդգրկված սովորողները պատասխանատվություն կկրեն համացանցային հարթակներից, հանրագիտարաններից թեմային առնչվող նյութերի հետազոտման և զեկույցների կազմման համար:

ԽՈՒՄԲ-2

Այս խմբում ընդգրկված սովորողները կպատրաստեն տեսասահիկներ և տեսահոլովակներ՝ օգտագործելով ՏՀՏ գործիքներ: Կանդրադառնան հայ և համաշխարհային նշանակության նկարիչների աշխատանքներին, կուսումնասիրեն դրանց ստեղծման պատմությունները: Բնության գրկում սովորողները կնկարեն բնանկար՝ միմյանց օգնելով և խորհուրդ հարցնելով: Այս կերպ նրանք ավելի մոտ կլինեն բնությանը, կշփվեն դրա հետ, և արդյունքում նկարները կստացվեն ավելի գունեղ ու գեղեցիկ: Երկու խմբերը, համադրելով իրենց ուսումնասիրությունները, հանդես կգան ավարտական աշխատանքով:

«**Բնանկարի աշխարհում» թեմայով նախագծային աշխատանքի արդյունքում կարելի է գրանցել հետևյալ արդյունքները**.

- Կբարձրանա սովորողների աշխատունակությունը, սովորելու հանդեպ մոտիվացիան:
- Աշխատանքի իրականացումը կօգնի ձևավորել գեղագիտական և աշխատանքային դաստիարակություն:
- Սովորողները կիմտանան կոլեկտիվ աշխատանքին:
- Սովորողները կմտերմանան ու կհամագործակցեն միմյանց հետ:
- Գզարգանա մշակութային կարողունակությունը:
- Սովորողները ձեռք կբերեն համալիր գիտելիքներ ու կարողություններ միջառարկայական կապերի շնորհիվ:
- Կզարգանա ՏՀՏ գործիքներով աշխատելու հմտությունը, տեքստերի հետ աշխատելու ունակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համակողմանի ուսումնասիրության ենթարկելով ուսուցման նախագծային մեթոդը, դրա անցած պատությունը, հիմնական գործառույթները, տեսակներն ու դրա կիրառելիության հնարավորությունները ՝ կատարեմք մի քանի արձանագրումները.

- Նախագծային մեթոդի ներդրում ՀՀ դպրոցներում էականորեն կնպաստի կրթության որակի բարձրացմանը՝ պայմանավորված մեթոդի աշակերտակենտրոն լինելու հանգամանքով:
- ՏՀՏ-ի զարգացումների ֆոնին Նախագծային մեթոդի ներդրումը ուղղակի անհրաժեշտություն է, քանի որ թույլ կտա կառավարել սովորողների մոտ առկա տեղեկատվական հոսքերը՝ ի նպաստ կրթության որակի բարձրացման:
- Ուսուցիչների վերապատրաստումների շնորհիվ նախագծային ուսուցումը կդառնա առաջնահերթություն՝ բացառելով մեթոդի ներդրմամբ պայմանավորված հնարավոր կադրային քաղցը:
- Նախագծային ուսուցումը, նախագծային մեթոդի համընդհանուր կիառությունը թույլ կտա սովորողին վերարժևորել սեփական գիտելիքը, ձգտել ավելիի, կարևորել ինքնակրթությունը:
- Նախագծային մեթոդի ներդրումը կօգնի սովորողներին տեսական ու գործնական բաղադրիչները արդյունավետ համակարգել, խթանել որոշակի խնդիրների նկատմամբ սովորողների հետաքրքրությունը, ինչը ենթադրում է համալիր գիտելիքների տիրապետում:
- Նախագծային մեթոդի ներդրումը կնպաստի սովորողների համար հասանելի դարձնել զանազան տեղեկատվական աղբյուրներից օգտվելու գործընթացները;
- Կերպարվեստի դասավանդման ընթացքում նախագծային ուսուցումն ունի կիրառման զանազան ձևեր ու հնարավորություններ՝ հաշվի առնելով ուսումնական առարկայի առանձնահատկությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 ՀՀ հանրակրթության մասին օրենք:
- https://escs.am/files/files/2020-07-15/abb6c78e3b3b8b5f8ca3922b1e161f7a.pdf Կերպարվեստ առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ եվ ծրագիր:
- Ա. Շագաֆյան Նախագծային ուսուցում, (Կրթություն ամենուր և բոլորին): https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
- ՀՀ կառավարություն ո ր ո շ ու մ 4 փետրվարի 2021 թվականի n 136-ն ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի n 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
- ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում«Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականիմայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft HYPERLINK "http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2336&Reading=0"& HYPERLINK "http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2336&Reading=0"DraftID=2336 HYPERLINK "http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2336&Reading=0"& HYPERLINK "http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2336&Reading=0"Reading=0«**Ուսուցչի կարգավիճակի մասին**» **ՀՀ օրենք**, **հոդված** 13:
- Վ. Զաքարյան, Հ. Ափյան, Մանկավարժական միտք, Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառության հնարավորությունը ուսուցման գործընթացում,Երևան, 2014: